ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12.10.2021 թիվ 160-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԻԲԵՌՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՐՏԱՀՈՍՔԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ, ԿԻԲԵՌՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 8-ի № 02/09.6/34055-2021 հանձնարարականը՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցներին՝ կիբեռհարձակումների և դրանց արդյունքում ծառայողական տեղեկատվության հնարավոր արտահոսքը կանխարգելելու նպատակով ծառայողական էլեկտրոնային նամակագրության համար օգտագործել միայն գերատեսչական պաշտոնական էլեկտրոնային փոստը:

2. Կիբեռհարձակումների և ծրագրային ապահովումների խոցելիությունների վերաբերյալ համապատասխան մասնագիտական խորհրդատվություններ ստանալու նպատակով պատասխանատու նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի ցանցային ադմինիստրատոր Վարդան Վաղինակի Մխիթարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

10/12/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. Գրիգորյան

12.10.2021
Ք. Եղեգնաձոր